



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան

«09» փետրվարի 2021թ N 108-Ա

Ա/Ձ ՋՈՒԼԵՏԱ ՊԱՊՈՅԱՆ ՍԱՀԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԹԱՆԿԱՐԺԵՔ
ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՈՒՄ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄՈՒՄ»
ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 7-րդ և 13-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի մայիսի 15-ի թիվ 537-Ա հրամանով, ինչպես նաև հիմք ընդունելով Ա/Ձ Ջուլետա Պապոյան Սահակի կողմից 2021 թվականի փետրվարի 8-ին ներկայացված դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ

1. Ա/Ձ Ջուլետա Պապոյան Սահակի կողմից իրականացվող «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշում» ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը՝ հաշվառման համարը՝ N ՀՀ 23 առ 06.02.2020թ.,

գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան փ., շենք 59/4, գործունեության իրականացման վայրը՝
ՀՀ, Կոտայքի մարզ, Համայնք Առինջ Գ թաղամաս, 9-րդ փողոց, թիվ 2 առևտրի սրահ,
դադարեցնել՝ համաձայն Ա/Ձ Ջուլետա Պապոյան Սահակի կողմից ներկայացված դիմումի:

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ սույն հրամանն ուժի մեջ
մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական
դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

2/10/2021

X 

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ARMEN 1310890650 ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ